.

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա Մակարդակ

1 Նկարում ո՞ր տառով է պատկերված արլ. ե. 135° միջօրեականը.

1) Է
2) Ը
3) Զ
4) Ե



2 Եթե քարտեզի անվանական մասշտաբը 1 սմ–ում 50 կմ է, ապա դրա թվային մասշտաբը կլինի.

1) 1 : 50 000
2) 1 : 500 000
3) 1 : 5 000 000
4) 1 : 50 000 000

3 Նկարում Դ կետի ազիմուտը հավասար է.

1) 225°
2) 135°
3) 45°
4) 315°



4 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հունիսի 22–ի կեսօրին Արեգակը լինում է զենիթում հվ. լ. 23° 30′ զուգահեռականի վրա:
2) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակը լինում է զենիթում հս. լ. 23° 30′ զուգահեռականի վրա:
3) Սեպտեմբերի 23–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հյուսիսային բևեռային շրջագծի վրա:
4) Մարտի 21–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:

5 **Երկրի խորքում բարձր ջերմաստիճանից ապարները վերածվում են գազերով ու ջրային գոլորշիներով հագեցած հրահեղուկ զանգվածի, որը կոչվում է.**

1) մագմա
2) լավա
3) մղանցք
4) խառնարան

6 **Օվկիանոսների հատակում տեղի ունեցող երկրաշարժերից առաջանում են կործանիչ ալիքներ, որոնք կոչվում են.**

1) տեղատվություն
2) ցունամի
3) ցիկլոն
4) մակընթացություն

7 **Բնութագրումով որոշել տեղումների տեսակը.**
Այն առաջանում է Երկրի մակերևույթին՝ ջրային գոլորշիների շփումից: Գոյանում է տարվա տաք եղանակներին, պարզկա (անամպ) գիշերներին, անհողմ օրերին: Տեղումների ո՞ր տեսակն է.

1) ցողը
2) եղյամը
3) անձրևը
4) կարկուտը

8 Երևան քաղաքում տարվա ընթացքում ըստ ամիսների ստացվել են միջին ամսական հետևյալ ջերմաստիճանները. – 4,5°, – 1,3°, + 5,4°, + 11,8°, + 17°, + 21,1°, + 25,1°, + 24,9°, + 20,1°, + 13,5°, + 6,2°, – 0,9°:
Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը կկազմի.

1) 19,1°
2) 12,8°
3) 29,6°
4) 31,2°

9 Նկարում Դ տառով նշված է.

1) նստվածքային շերտը
2) բազալտային շերտը
3) գրանիտային շերտը
4) միջնապատյանը



10 Նկարում ո՞ր թվով է նշված ամենացածր մթնոլորտային ճնշումը.

1) 1
2) 2
3) 3
4) 4



11 «Ծովածոց — օվկիանոս» զույգերից ընտրել ճիշտը.

1) Կալիֆոռնիական — Հնդկական
2) Մեծ ավստրալական — Հյուսիսային սառուցյալ
3) Պարսից — Խաղաղ
4) Մեքսիկական — Ատլանտյան

12 **Տափաստանների զոնան բնորոշվում է.**

1) տարեկան ցածր ջերմաստիճաններով, քիչ տեղումներով, որոնք հիմնակա-նում թափվում են ձյան տեսքով, ցածրահասակ բուսականությամբ
2) ցամաքային կլիմայով՝ տաք ու խոնավ ամառով, ցուրտ ձմեռով, հումուսով հարուստ (մինչև 8–12 %) սևահողերով
3) խիստ չոր ցամաքային կլիմայով, օրական և տարեկան ջերմաստիճանների մեծ տատանումներով, շատ աղքատ բուսականությամբ՝ չորադիմացկուն տեսակներով
4) սեզոնային կլիմայով, ամռանը թափանցող հասարակածային, իսկ ձմռանը՝ արևադարձային օդային զանգվածներով, բուսականության մեջ բարձրացողուն (2–3 մ) հացազգիների և ծառերի գերակշռությամբ

13 **Բնութագրումով որոշել գետը.**
Եվրասիայի ամենաերկար ու ամենաջրառատ գետն է, ունի ամառային հորդացում: Ո՞ր գետն է.

1) Ամուր
2) Հուանհե
3) Գանգես
4) Յանցզի

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Խոշոր մասշտաբի քարտեզների խմբի մեջ մտնում են 1 : 10 000 000–ից ավելի փոքր մասշտաբի քարտեզները:
2) Սկզբնական միջօրեականը Երկիրը բաժանում է հյուսիսային և հարավային կիսագնդերի:
3) Բոլոր զուգահեռականներն ունեն հավասար երկարություն:
4) Աշխարհագրական լայնությունը Երկրի մակերևույթի որևէ կետի հեռա-վորությունն է հասարակածից՝ արտահայտված աստիճաններով:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արևադարձային լայնություններում հաստատվում է ցածր ճնշում:
2) Որքան փոքր է Արեգակի ճառագայթների անկման անկյունը, այնքան Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:
3) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում առատ տեղումներ են թափվում:
4) Արեգակից ստացվող ջերմությունը Երկրի վրա բաշխված է հավասարաչափ:

16 **«Գետ— ջրվեժ» զույգերից ընտրել սխալը.**

1) Կոնգո — Լիվինգստոնի
2) Ամազոն — Իգուասու
3) Զամբեզի— Վիկտորիա
4) Չուրուն — Անխել

17 **«Մայրցամաք — թերակղզի» զույգերից ընտրել *սխալը.***

1) Աֆրիկա — Սոմալի
2) Եվրասիա — Ալյասկա
3) Հյուսիսային Ամերիկա — Ֆլորիդա
4) Ավստրալիա — Քեյփ Յորք

18 **Կալիֆոռնիա թերակղզու կլիման.**

1) խոնավ արևադարձային է
2) բարեխառն ցամաքային է
3) բարեխառն ծովային է
4) արևադարձային անապատային է

19 **Քարտեզում Դ տառով ո՞ր գետն է նշված.**

1) Գանգես
2) Եփրատ
3) Տիգրիս
4) Ինդոս



20 **Քարտեզում Զ տառով ո՞ր պետությունն է նշված.**

1) Ուզբեկստան
2) Աֆղանստան
3) Պակիստան
4) Իրան

21 **«Ժողովրդագրական պայթյունը».**

1) բնակչության թվի կտրուկ աճն է մահացության կրճատման հետևանքով
2) բնակչության թվի կայուն աճն է ընդլայնված վերարտադրության պայմաններում
3) բնակչության թվի կտրուկ նվազումն է ծնելիության կրճատման հետևանքով
4) բնակչության թվի կայունացումն է պարզ վերարտադրության պայմաններում

22 **Բնակության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է.**

1) տարաբնակեցում
2) բնակչության միգրացիա
3) բնակչության տեղաբաշխում
4) բնակչության բնական շարժ

23 **Բնութագրումով որոշել պետությունը.**
Այս պետությունը մեծ հետք է թողել մարդկային քաղաքակրթության մեջ և բացառիկ դեր ունի արաբական աշխարհում: Տիպիկ անապատային երկիր է: Այստեղ է երկրագնդի ցամաքի ամենացածր վայրերից մեկը: Մայրաքաղաքն արաբական աշխարհի խոշորագույն քաղաքն է: Պետությանը մեծ եկամուտ ապահովող բնագավառ է միջազգային զբոսաշրջությունը: Ո՞ր պետությունն է.

1) Սիրիան
2) Եգիպտոսը
3) Սաուդյան Արաբիան
4) Լիբիան

24 **Երկրի բնակչության թիվը 4 մլն է, բնական աճը՝ 20 ‰: Բնակչության բացարձակ բնական աճը կկազմի.**

1) 20 000 մարդ
2) 40 000 մարդ
3) 80 000 մարդ
4) 100 000 մարդ

25 **Ընտրել «լեզվախումբ — ժողովուրդ» համապատասխանության ճիշտ շարքը.**

1. ռոմանական	ա. անգլիացիներ
2. սլավոնական	բ. ֆրանսիացիներ
3. գերմանական	գ. քրդեր
4. իրանական	դ. ուկրաինացիներ

1) 1–ա, 2–բ, 3–գ, 4–դ
2) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ
3) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ
4) 1–բ, 2–դ, 3–գ, 4–ա

26 **Դեպի Կարմիր ծով անմիջական ելք *չունի.***

1) Եգիպտոսը
2) Եմենը
3) Օմանը
4) Սաուդյան Արաբիան

27 **«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) հաստոց — մետաղաձուլություն
2) պլաստմասսա — մեքենաշինություն
3) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
4) սինթետիկ մանրաթել — թեթև արդյունաբերություն

28 **Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Իսքենդերունը սև մետաղաձուլության խոշորագույն կենտրոնն է:
2) Երկրի քիմիական արդյունաբերությունն արտադրում է դեղագործական ապրանքների համաշխարհային արտադրանքի գերակշիռ մասը:
3) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ջեկերում:
4) Թեթև արդյունաբերությունը երկրի արդյունաբերության ավանդական զարգացած ճյուղերից է:

29 **«Կեղծ ուրբանիզացումն» առավել բնորոշ է.**

1) ԱՄՆ–ին և Կանադային
2) Ֆրանսիային և Շվեյցարիային
3) Ավստրալիային և Մեծ Բրիտանիային
4) Արգենտինային և Բրազիլիային

30 **Դեպի ծով ելք չունեն.**

1) Ավստրիան և Չեխիան
2) Ալժիրը և Պերուն
3) Բելգիան և Բուլղարիան
4) Ռումինիան և Ուկրաինան

31 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Նավթի համաշխարհային պաշարների մոտ 9/10–ը կենտրոնացված է զարգացած երկրներում:
2) Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն ատոմային էլեկտրակայանները:
3) Քիմիական արդյունաբերության գիտատար ճյուղերը տեղաբաշխված են զարգացող երկրներում:
4) Էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության 4/5–ը բաժին է ընկնում զարգացած երկրներին:

32 **Էներգետիկական հաշվեկշռում ջրէկների առավել մեծ բաժին ունեցող երկրներ են.**

1) Ուկրաինան և ԱՄՆ–ը
2) Նորվեգիան և Կանադան
3) Չինաստանը և Ֆրանսիան
4) Գերմանիան և Ճապոնիան

33 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են:
2) Գեղամա լեռնավահանը ճառագայթաձև մասնատվել է Գեղարոտի, Ամբերդի խոր հովիտներով:
3) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
4) Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները մասնատված են Արփայի և Արաքսի գետահովիտներով:

34 **ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացմանն առավելապես նպաստել է.**

1) Ատոմային էլեկտրակայանի կառուցումը
2) արդյունաբերության բնապահպանական ուղղվածությունը
3) սև մետաղաձուլության թափոնների առկայությունը
4) հանքային քիմիական հումքի խոշոր պաշարների առկայությունը

35 **Լոռու մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) այգեգործությունը
2) ծխախոտի մշակությունը
3) հացահատիկի մշակությունը
4) կարտոֆիլի մշակությունը

36 **Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված Դ տառով.**

1) Լալվար
2) Եղնասար
3) Աչքասար
4) Մեծ Եղնախաղ



37 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված *Հ* տառով.**

1) Մասիս
2) Վեդի
3) Արարատ
4) Արտաշատ

38 **Ածխի պաշարներով հարուստ երկրներ են.**

1) Իրանը և Թուրքիան
2) Ֆրանսիան և Իսպանիան
3) Ռուսաստանը և Ուկրաինան
4) Ճապոնիան և Մոնղոլիան

39 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
2) ջրէկներում էներգետիկ նպատակներով օգտագործված ջրերը
3) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը
4) քիմիական պարարտանյութերը

40 **Բնության այն տարրերն ու երևույթները, որոնք անմիջապես չեն օգտագործվում և սպառվում արտադրության գործընթացի ընթացքում, բայց կարող են ազդեցություն ունենալ դրա վրա, կոչվում են.**

1) բնական ռեսուրսներ
2) արտադրողական ուժեր
3) բնական պայմաններ
4) աշխատանքի միջոցներ

41 **Գրել այն կղզիների և կղզեխմբերի համարները, որոնք Ատլանտյան օվկիանոսում և նրա ծովերում են.**

1) Մոզամբիկ
2) Իսլանդիա
3) Նյուֆաունդլենդ
4) Շրի Լանկա
5) Ֆոլկլենդյան
6) Սարդինիա
7) Ալեության
8) Կուրիլյան

42 **Գրել այն լեզուների համարները, որոնք չեն մտնում սլավոնական լեզվախմբի մեջ.**

1) լեհերեն
2) սերբերեն
3) շվեդերեն
4) էստոներեն
5) չեխերեն
6) սլովակերեն
7) ռուսերեն
8) բուլղարերեն

43 **Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները.**

1) Գետիկ
2) Որոտան
3) Մարմարիկ
4) Արփա
5) Հրազդան
6) Խաչենագետ
7) Փամբակ
8) Դեբեդ

44 **Տրված պետությունները դասավորել պողպատի արտադրության աճման կարգով.**

1) Չինաստան
2) Գերմանիա
3) Ճապոնիա
4) ԱՄՆ

45 **Եվրասիայի ներքին ջրերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Եվրասիայի գետերը պատկանում են երեք օվկիանոսների ավազաններին և կենտրոնաասիական ներքին անհոսք ավազանին:
2) Խաղաղ օվկիանոսի ավազանին են պատկանում մայրցամաքի ամենաջրառատ գետերը:
3) Յանցզին, Հուանհեն, Մեկոնգը և Ամուրը հորդանում են ձմռանը:
4) Կենտրոնաասիական փակ, ներքին անհոսք ավազանին են պատկանում Վոլգա, Կուր և Արաքս գետերը:
5) Տեկտոնահրաբխային ծագման լճերից հայտնի են Վեներնը և Վետերնը:
6) Մեռյալ լճի ջրերն այնքան քաղցրահամ են, որ լճում բացակայում է կենդանական աշխարհը:

Բ Մակարդակ

46 **Հաշվել երկու կետերի իրական հեռավորությունը, եթե նրանք միևնույն միջօրեականի վրա են և միմյանցից հեռացված են 8°.**

1) 858 կմ
2) 808 կմ
3) 888 կմ
4) 880 կմ

47 **Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը հավասար կլինի + 11°–ի, եթե նույն պահին Արագածի գագաթին – 4°է (յուրաքանչյուր 1000 մ–ին ջերմաստիճանի Փոփոխությունն ընդունել 5°).**

1) 1090 մ
2) 1900 մ
3) 1009 մ
4) 1000 մ

48 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Օվկիանոսի հատակի մինչև 200 մ խորության հատվածը կոչվում է մայրցամաքային լանջ:
2) Մերձբևեռային շրջաններում օվկիանոսի ջուրը սառչում է 0°–ում:
3) Օվկիանոսի այն հատվածը, որը ներթափանցել է ցամաքի մեջ, կոչվում է նեղուց:
4) Օվկիանոսի հատակին տեղի ունեցող երկրաշարժից առաջացած ալիքը կոչ-վում է ցունամի:

49 **Ի՞նչը բնորոշ չէ բարեխառն օդային զանգվածներին**.

1) ձևավորվում են 40°–70°լայնությունների միջև
2) արկտիկական և արևադարձային օդի միախառնման արդյունք են
3) ծովային և ցամաքային տարատեսակները խիստ տարբեր են. ծովայինը բնորոշվում է մեծ խոնավությամբ, իսկ ցամաքայինը՝ չորությամբ
4) առանձնանում են բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ (մեծ փոշոտվածության պատճառով)

50 **Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Հարավային Ամերիկայում.**

1) Պադանի դաշտավայր, Վինսոն լեռ, Իսիկ Կուլ լիճ
2) Լա Պլատայի դաշտավայր, Օրինսաբա հրաբուխ, Էրի լիճ
3) Լավրենտյան սարահարթ, Կոտոպախի հրաբուխ, Մեծ արջի լիճ
4) Օրինոկոյի դաշտավայր, Ռուիս հրաբուխ, Պոոպո լիճ

51 **Բացարձակ միապետություններ են.**

1) Ճապոնիան և Մեծ Բրիտանիան
2) Նորվեգիան և Շվեդիան
3) Օմանը և Բրունեյը
4) Նիդերլանդները և Բելգիան

52 **Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ չեն.**

1) Ֆրանսիան և Իտալիան
2) Ռուսաստանը և Բելառուսը
3) Նիգերը և Սուդանը
4) Կանադան և Ավստրալիան

53 **Բրնձի համախառն բերքով առաջատար երկրներն են.**

1) ԱՄՆ–ը և Ռուսաստանը
2) Ավստրալիան և Բրազիլիան
3) Կանադան և Մեքսիկան
4) Չինաստանը և Հնդկաստանը

54 **Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ջերմային էլեկտրակայաններում:
2) Մեծ Բրիտանիայից բաժանվում է Ջիբրալթարի նեղուցով:
3) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:
4) Ֆրանսիային են պատկանում Սարդինիա և Կորսիկա կղզիները:

55 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Այս երկիրն իր տարածքով և բնակչության թվով դասվում է աշխարհի գերխոշոր երկրների շարքին: Արևելքում ափերը ողողվում են Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Այն հարուստ է գրեթե բոլոր տեսակի օգտակար հանածոներով: Սակայն անբավարար են վառելիքաէներգետիկ ռեսուրսները: Ո՞րն է այդ երկիրը.

1) ԱՄՆ–ը
2) Մեքսիկան
3) Բրազիլիան
4) Արգենտինան

56 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Զբաղեցնում է մոտ 200 հազ. կմ² մակերես:
2) Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտու կենտրոնական մասում է:
3) Սև ծովի ափին զուգահեռ տարածվում են Արևելապոնտական լեռները:
4) Լեռնաշխարհից արևմուտք տարածվում է Իրանական բարձրավանդակը:

57 **ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
2) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
3) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին:
4) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):

58 **Տավուշի մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղին պատկանող ձեռնարկությունները *չկան.***

1) գինեգործության
2) սարքաշինության
3) գորգագործության
4) պղնձաձուլության

59 **Արմավիրի և Արարատի մարզերի համար ի՞նչը ընդհանուր չէ.**

1) Բացառապես հարթավայրային մակերևույթ ունեցող մարզեր են:
2) Հանրապետությունում ամենազարգացած գյուղատնտեսությունն ունեցող մարզերն են:
3) Բուսաբուծության առաջատար ճյուղերը խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունն են:
4) Գյուղատնտեսության զարգացման գլխավոր պայմանը ոռոգումն է:

60 **Ո՞ր շարքում տրված մարզերի համար է գունավոր մետալուրգիան մասնագիտացման ճյուղ.**

1) Գեղարքունիքի և Շիրակի
2) Լոռու և Սյունիքի
3) Արագածոտնի և Շիրակի
4) Արմավիրի և Վայոց ձորի

61 **Տրված են Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերը: Դասավորել դրանց համարները լճերի մակերեսների աճման կարգով.**

1) Սևանա
2) Ուրմիա
3) Վանա

62 **Գրել այն ջրէկների համարները, որոնք չեն մտնում Հրազդանի կասկադի մեջ.**

1) Քանաքեռի	5) Այրումի
2) Տաթևի	6) Սևանի
3) Արգելի	7) Արզնիի
4) Երևանի	8) Շամբի

63 **Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակցում են Ֆրանսիային.**

1) Պորտուգալիա	5) Սան Մարինո
2) Դանիա	6) Լյուքսեմբուրգ
3) Նիդերլանդներ	7) Լիխտենշտայն
4) Ավստրիա	8) Բելգիա

64 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բամբակի արտադրությամբ.**

1) Կանադա
2) Ռուսաստան
3) Իրան
4) Վրաստան
5) Չինաստան
6) Պակիստան
7) Ֆրանսիա
8) Գերմանիա

65 **Օդի բացարձակ խոնավությունը 15 գ/մ^3 է: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 20 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:**

(66-67) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330 մմ:

66 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

67 Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

(68-69) Գետի լայնությունը 10 մ է, միջին խորությունը՝ 0,6 մ, ջրի արագությունը՝ 3,5 մ/վ.

68 *Որոշել գետի ծախսը:*

69 *Որոշել գետի հոսքը մեկ ժամում:*

70 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
2) ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում Հայկական ատոմի բաժինը կազմում է ավելի քան 2/5–ը:
3) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
4) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
5) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
6) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):